ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022թ. հուլիսի 26-ից 29-ը Գերմանիայի Դաշնային Հանրապետություն՝ ք. Նյուրենբերգ կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝
Արման Խոջոյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝
ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

3.Գործուղման վայրը և ժամկետները՝
Գերմանիայի Դաշնային Հանրապետություն՝ ք. Նյուրենբերգ, 2022թ. հուլիսի 26-29-ը

4. Հրավիրող կողմը՝
Ավստրիական Զարգացման Գործակալություն

5. Գործուղման նպատակը՝
- Մասնակցություն BIOFACH օրգանական արտադրանքի ցուցահանդեսին

6. Քննարկված թեմաները՝

- BIOFACH օրգանական արտադրանքի ցուցահանդես. երկրի մասնակցություն
- Հայաստանում օրգանական արտադրանքի ծավալների ավելացման հնարավորություններ
- Միջազգային շուկայում հայկական օրգանական արտադրանքի ինտեգրման հնարավորություններ
- ԵՄ տեխնիկական կանոնակարգերին համապատասխան հավաստագրված արտադրանքի արտահանման հնարավորություններ դեպի ԵՄ երկրներ
- Գերմանիայի Դաշնային Հանրապետության սննդի և գյուղատնտեսության նախարարության հետ երկկողմ փոխգործակցության հնարավորությունների դիտարկում
- Ավստրիական զարգացման գործակալության կողմից իրականացվող ընթացիկ ծրագրերի ընդլայնում և համագործակցության նոր ուղիների նախանշում

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

- 2022թ.-ին հուլիսի 26-29-ը Գերմանիայի Նյուրենբերգ քաղաքում տեղի ունեցավ BIOFACH օրգանական արտադրանքի ցուցահանդեսը: 33 տարի շարունակ ամենամյա պարբերականությամբ կազմակերպվող ցուցահանդեսը յուրաքանչյուր տարի հյուրընկալում է հազարավոր արտադրողների, գնորդների, ոլորտի փորձագետների, քաղաքականություն մշակող ու համակարգող պետական պաշտոնյաների: Ցուցահանդեսի շրջանակում տեղի ունեցավ նաև BIOFACH 2022 Կոնգրեսը, որը այս տարի անց էր կացվում «Օրգանիկ: Կլիմա: Ճկունություն» խորագրի ներքո: Ցուցահանդեսի ընթացքում Արման Խոջոյանը ներկայացրեց օրգանական արտադրության ոլորտում հանրապետությունում իրականացվող գործընթացները և զարգացման հեռանկարները՝ կարևորելով Հայաստանում արտադրված հումքի մատակարարումները խոշոր ընկերություններին: Միջոցառմանը Հայաստանի Հանրապետությունը ներկայացավ մեկ միասնական տաղավարով: Հայկական ութ կազմակերպություն հնարավորություն ստացան աշխարհի առաջատար ընկերություններին, առևտրային ցանցերին և հնարավոր արտահանողներին ներկայացնել սեփական արտադրանքը:
  Ցուցահանդեսից բացի միջոցառումը նաև ներառում էր կոնգրես-հանդիպումներ օրգանական ոլորտին առնչվող տարատեսակ հարցերով, որոնցից ամենակարևորները կապված էին Եվրամիությունում օրգանական արտադրության օրենսդրության փոփոխության և դրա կիրառման և տեղայնացման հետ:
  Մասնավորապես, նախկինում ԵՄ երրորդ երկրների համար կիրառում էր համարժեքության (equivalence) սկզբունքը, որը վերջին օրենսդրական փոփոխությամբ փոխարինվեց համապատասխանության (compliance) սկզբունքով:
  Այսինքն, եթե նախկինում երրորդ երկրներին տրված էր հնարավորություն ԵՄ կանոնակարգը ենթարկել որոշ տեղայնացման (համապատասխան տեղական շուկայի հնարավորություններին), որից հետո ԵՄ կողմից հաստատվում էր դրա էկվիվալենտությունը ԵՄ կանոնակարգերին, ապա ներկայիս ԵՄ կանոնակարգը կիրառվելու է անմիջական տեսքով, համապատասխանության սկզբունքով: Արդյունքում, կանոնակարգերը նույնն են լինելու ԵՄ ներսում կամ դրանից դուրս արտադրողների համար: Գործընթացն իրենից ենթադրում է նաև օրգանական սերտիֆիկացման ենթակա ապրանքների տեսականու ընդլայնում:
  Փոփոխություններ կան նաև արտադրության և վերամշակման կանոններում, մասնավորապես տնտեսությունները պարտավոր կլինեն աճեցնել լոբազգիներ՝ հողի բերրիությունը բարելավվելու նպատակով: Հիդրոպոնիկ արտադրությունը մնում է

արգելված: Սննդի վերամշակման մեջ հիմնական փոփոխությունը վերաբերում է համեմունքների արտադրությանը և օգտագործմանը: Թույլատրվում է միայն բնական բուրավետիչների օգտագործումը:
Միաժամանակ, արտադրողների խմբերի հավաստագրումն այժմ հասանելի կլինի նաև ԵՄ տարածքում, բայց կկիրառվեն սահմանափակումներ կոպերատիվների կամ խմբերի անդամների քանակի դեպքում:

- Հանդիպում Ավստրիական զարգացման գործակալության ծրագրերի ղեկավար Հայնց Հաբերթաուերի և ԱԶԳ-ի Երկրների և ռեգիոնների պատասխանատու Օուլթեր Եհմայերի հետ: Կողմերը անդրադարձան երկկողմ համագործակցության ընդլայնման հնարավորությանը, ինչը կնպաստի տեղական արտադրանքի ծավալների ավելացմանը և կանաչ գյուղատնտեսության զարգացմանը Լոռու, Տավուշի և Շիրակի մարզերում: Անդրադարձ կատարվեց նաև պարենային անվտանգության մակարդակի բարձրացմանն ուղղված հնարավոր համագործակցությանը՝ շեշտադրելով թիրախային և ռեգիոնալ ծրագրերի իրականացումը:
- Հանդիպում Գերմանիայի Դաշնային Հանրապետության պարենի և գյուղատնտեսության նախարարության ներկայացուցիչ Քրիսթոֆ Գիլգենի հետ: Հանդիպման ընթացքում կողմերը քննարկեցին երկկողմ հարաբերությունների զարգացման հնարավորությունները մասնավորապես ջրային ռեսուրսների կառավարման, գինեգործության ոլորտներում: Գերմանական կողմը անդրադարձ կատարեց գինեգործության ոլորտում մասնագիտացած աշխատանքային խմբի գործունեությանը, որում ընդգրկված են ներկայացուցիչներ Բալկանյան երկրներից, Վրաստանից, Մոլդովայից և Հայաստանին առաջարկվեց նույնպես միանալ աշխատանքային խմբին:
- Հանդիպում IFOAM օրգանական միջազգային կազմակերպության գործադիր տնօրեն Լուիզ Լյութիկհոլթի և խորհրդի նախագահ Քերեն Մապուսուայի հետ: Հանդիպման ընթացքում կողմերը քննարկեցին Հայաստանում օրգանական գյուղատնտեսության զարգացման հեռանկարները, օրգանական արտադրանքի ծավալների ավելացման և եվրոպական շուկայում ինտեգրման հնարավորությունները, Հայաստանից ԵՄ տեխնիկական կանոնակարգերին համապատասխան հավաստագրված արտադրանքի արտահանման կազմակերպմանը դեպի ԵՄ երկրներ:
- Հանդիպում շվեյցարական «ՖԻԲԼ» Օրգանական գյուղատնտեսության հետազոտական ինստիտուտի ներկայացուցիչների հետ: Հանդիպման ընթացքում Արման Խոջոյանին մանրամասն ներկայացվեցին հետազոտական ինստիտուտի կողմից կատարվող աշխատանքները, մասնավորապես հետազոտությունները օրգանական արտադրանքի ասպարեզում: Արման Խոջոյանը նշեց, որ ՀՀ ԷՆ համար առաջնային է տվյալների վրա հիմնված քաղաքականության մշակումը և այդ առումով անգնահատելի է «ՖԻԲԼ» գիտահետազոտական ինստիտուտի կողմից աջակցության

մեխանիզմների կիրառումը ՀՀ-ում օրգանական գյուղատնտեսության խթանման նպատակով: Ինստիտուտի ներկայացուցիչներն առաջարկեցին մշակել Հայաստանում օրգանական արտադրության կարողությունների հզորացմանն ուղղված գործողությունների ծրագիր:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

03.08.2022թ.